ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 01.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/28

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից 21.08.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/28 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Սյունիք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սյունիք» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 21.08.2017թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Արմավիրի մարզի օբյեկտների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 06.06.2017թ. հայտարարվել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընկերությունը սահմանված կարգով հայտ է ներկայացրել գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով: Հայտերի բացումը տեղի է ունեցել 21.06.2017թ.: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում Ընկերությունը 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով զբաղեցրել է 2-րդ տեղը, այնինչ

նշված չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ի գնային առաջարկում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես 2-րդ չափաբաժնի կատարման համար մասնակիցը ներկայացրել է 28 847 000 ՀՀ դրամի գնային առաջարկ, որի ԱԱՀ-ն օրենքով սահմանված կարգով կազմում է 4 812 400 ՀՀ դրամ, սակայն մասնակիցը որպես ԱԱՀ-ի գումար ներկայացրել է 4 812 000 ՀՀ դրամ, այսինքն՝ սահմանված չափից 400 ՀՀ դրամ պակաս, իսկ 5-րդ չափաբաժնի մասով մասնակիցը ներկայացրել է 16 108 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որի ԱԱՀ-ն օրենքով սահմանված կարգով կազմում է 2 684 600 ՀՀ դրամ, սակայն մասնակիցը որպես ԱԱՀ-ի գումար ներկայացրել է 2 685 000 ՀՀ դրամ:

Նշված խնդրի մասով «Սյունիք» ՍՊԸ-ն բողոք էր ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին: Խորհուրդը 28.07.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/20 որոշմամբ բավարարել է բողոքը, որի համաձայն՝ նշված չափաբաժինների մասով «Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից կազմակերպված «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 02.08.2017թ. կազմվել է արձանագրություն (առանց հերթական համարի), որն ուղարկվել է գնումների բողոքարկման խորհրդի անդամ պարոն Մ. Անանյանին, համաձայն որի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Խորհրդի կողմից կայացված որոշումը, մերժում է 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով «Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում «Սյունիք» ՍՊԸ-ին: Սակայն Արմավիրի մարզպետարանի կողմից «Սյունիք» ՍՊԸ-ին որևէ գրություն կամ այլ փաստաթուղթ չի ուղարկվել: Այնինչ 17.08.2017թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշումը (անգործության ժամկետ), որից հայտնի է դառնում, որ 15.08.2017թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ, որի համարը նույնպես նշված չէ, մերժվել է «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և նշված չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել 3-րդ տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընկերությունը նշել նաև, որ պայմանագիր կնքելու որոշումը հրապարակելու օրը հրապարակվել է նաև կնքված պայմանագրի մասին հայտարարությունը, որից հայտնի է

դառձել, որ 17.08.2017թ. հաղթող մասնակիցների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը բողոքով Խորհրդին խնդրել է չեղյալ ճանաչել ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից կազմակերպված «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը և կնքված պայմանագրի մասին հայտարարությունները և «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովից պահանջել Ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացնել «Սյունիք» ՍՊԸ-ին:

«Սյունիք» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 25.08.2017թ. ժամը 11:50-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ Արմավիրի մարզպետարանը 24.08.2017թ. թիվ 02/04/35081-17 գրությամբ ներկայացրել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից կազմակերպված «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով մրցույթի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով 28.07.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-

ԱՄ-2017/20 որոշումը հիմք ընդունելով՝ 02.08.2017թ. կայացած գնահատող հանձնաժողովի նիստի որոշմամբ «Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին: Սակայն մինչև «Սյունիք» ՍՊԸ-ին նման պահանջ ներկայացնելը մրցույթը կասեցվել է և որոշվել է պարզաբանման նպատակով հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից մրցույթի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ներկայացված վճարման պահանջագրերի վավերականության վերաբերյալ:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունից 11.08.2017թ. ստացված թիվ 03/27-1/14672-17 պատասխան գրության՝ «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտը ենթակա է մերժման, որը և հիմք է ընդունվել հանձնաժողովի կողմից և փաստաթղթերի ներկայացման պահանջ է ներկայացվել համապատասխանաբար հաջորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներին, որոնց հետ օրենքով նախատեսված անգործության ժամկետը լրանալուց հետո կնքվել են պայմանագրեր:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 25.08.2017թ. ժամը 11:50-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի օբյեկտների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Սյունիք» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2017թ. նիստի արձանագրության 1.1 համաձայն՝ Ընթացակարգի գնահատման արդյունքում, 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով, հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացված որոշումը՝ հանձնաժողովը որոշել է մերժել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Սյունիք» ՍՊԸ-ին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.08.2017թ. նիստի 1.1-րդ կետի համաձայն՝ «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.08.2017թ. որոշման արդյունքում ընտրված մասնակիցներ են ճանաչվել 2-րդ չափաբաժնի մասով՝ «Լուսի Արեգ» ՍՊԸ-ն և 5-րդ չափաբաժնի մասով՝ «Արթմաշին» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 1.2-րդ կետով սահմանվել է, որ ընտրված մասնակիցների հետ պայմանագրերը կկնքվեն օրենքով նախատեսված անգործության ժամկետը լրանալուց հետո:

4. ***17.08.2017թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց մրցույթի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին հայտարարություն,*** որի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի 15.08.2017թ. որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները:

5. Նույն հայտարարության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի հիման վրա անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամակահատվածը:

6. ***17.08.2017թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի օբյեկտների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարությունը,*** որի համաձայն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ՀՀ

Արմավիրի մարզպետարանի և «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի միջև 17.08.2017թ. կնքվել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6-2» ծածկագրով գնման պայմանագիրը և Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով ՀՀ Արմավիրի մարզպետարանի և «Արթմաշին» ՍՊԸ-ի միջև 17.08.2017թ. կնքվել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6-5» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագիրը:

7. Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սյունիք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում չի կայացվել:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Սյունիք» ՍՊԸ-ի 21.08.2017թ. բողոքը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի 24.08.2017թ. թիվ 02/04/35081-17 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-5-րդ մասերի համաձայն՝

1. Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2. ***Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:***

3. ***Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է:*** Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

5. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: ***Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:***

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ ***պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, ***հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի համաձայն՝

8. ***Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն,*** որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

9. Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու

պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի օբյեկտների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 16:00-ի հայտերի բացման նիստի թիվ 1 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ Ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ն:

«Սյունիք» ՍՊԸ-ն 13.07.2017թ. բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին՝ խնդրելով դադարեցնել «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ Ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով «Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը և նշված չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սյունիք» ՓԲԸ-ին:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 28.07.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/20 որոշմամբ մասնակի բավարարել է «Սյունիք» ՍՊԸ-ի բողոքը՝ դադարեցնելով «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝

Ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով «Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.08.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի վերը նշված որոշման հիման վրա որոշել է մերժել «Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ի հայտը Ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Սյունիք» ՍՊԸ-ին:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն 02.08.2017թ. թիվ 02/04/3202-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով ներկայացնել պարզաբանում «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված վճարման պահանջագրի՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Ի պատասխան Պատվիրատուի վերոհիշյալ գրությանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.08.2017թ. թիվ 03/27-1/25672-17 գրությամբ համապատասխան հիմնավորումների շրջանակներում գտել է, որ Ընկերության հայտը ենթակա է մերժման:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.08.2017թ. նիստի արձանագրության 1.1 կետով Ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակիցներ է ճանաչել համապատասխանաբար «Լուսի Արեգ» ՍՊԸ-ին և «Արթմաշին» ՍՊԸ-ին և նույն արձանագրության 1.2-րդ կետով սահմանվել է, որ ընտրված մասնակիցների հետ պայմանագրերը կկնքվեն օրենքով նախատեսված անգործության ժամկետը լրանալուց հետո:

Ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2017թ. և 12.08.2017թ. նիստերի արձանագրությունները Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն առանց սահմանված կարգով նշված չափաբաժինների մասով «Սյունիք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին հիմնավորված որոշում կայացնելու, ընտրված մասնակիցներ է ճանաչել «Լուսի Արեգ» ՍՊԸ-ին և «Արթմաշին» ՍՊԸ-ին, մինչդեռ Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, ***հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում մասնակցի հայտը մերժելու մասին որոշումը պետք է պարունակի մերժման***

հիմնավորումը: Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի կայացվել Ընկերության հայտը մերժելու մասին որոշում՝ մատնանշելով մերժման հիմքերը, որից հետո միայն գնահատող հանձնաժողովը կարող էր փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ կետը սահմանում է, որ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը,*** որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Միևնույն ժամանակ նույն կարգի 46-րդ կետը նախատեսում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն ոչ ուշ քան հաջորդող երրորդ աշխատանքային օրը հրավիրվում է ***հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստ, որի շրջանակներում*** հանձնաժողովը գնահատում է ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը: Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Հետևաբար հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները պետք է արտացոլվեն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրության մեջ, ինչը, Խորհուրդն արձանագրում է, որ տվյալ դեպքում բացակայում է:

www.gnumner.am համացանցային կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ 17.08.2017թ. հրապարակվել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի

արդյունքներով պայմանագիր կնքելու մասին հայտարարություն, որի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի 15.08.2017թ. որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ ***17.08.2017թ.*** համացանցային կայքում հրապարակվել է ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի օբյեկտների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի արդյունքում ***կնքված պայմանագրի մասին հայտարարությունը,*** որի համաձայն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ՀՀ Արմավիրի մարզպետարանի և «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի միջև 17.08.2017թ. կնքվել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6-2» ծածկագրով գնման պայմանագիրը և Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով ՀՀ Արմավիրի մարզպետարանի և «Արթմաշին» ՍՊԸ-ի միջև 17.08.2017թ. կնքվել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6-5» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է, որ ***անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է: Ընդ որում մրցույթի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է:***

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ 17.08.2017թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակված «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով **բաց մրցույթի** արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության մեջ նշվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի հիման վրա անգործության ժամկետ է սահմանվում հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամակահատվածը, մինչդեռ Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***մրցույթի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է:*** Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգը հանդիսանում է մրցույթ, ուստի համաձայն Օրենքի 10-

րդ հոդվածի, վերջինիս դեպքում անգործության ժամկետը պետք է սահմանվեր առնվազն 10 օրացուցային օր:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ պայմանագիր կնքելու մասին որոշման հրապարակման նույն օրը (17.08.2017թ.) Պատվիրատուի կողմից «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց մրցույթի արդյունքներով կնքվել են պայմանագրեր, որի վերաբերյալ հայտարարությունը նույնպես 17.08.2017թ. հրապարակվել է տեղեկագրում:

Մինչդեռ Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ ***պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:***

Այսպիսով Խորհուրդն գտնում է, որ Պատվիրատուի կողմից նույնպես խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, 36-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց մրցույթի արդյունքներով 2-րդ չափաբաժնի մասով ՀՀ Արմավիրի մարզպետարանի և «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի միջև 17.08.2017թ. կնքված «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6-2» ծածկագրով գնման պայմանագիրը և 5-րդ չափաբաժնի մասով ՀՀ Արմավիրի մարզպետարանի և «Արթմաշին» ՍՊԸ-ի միջև 17.08.2017թ. կնքված «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6-5» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագիրը Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն ***առոչինչ են, քանի որ նշված նորմի համաձայն՝ մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:***

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ ***անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):***

Օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք

կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

Նույն օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուն Ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագրերը կնքել է մինչև Օրենքով նախատեսված անգործության ժամկետը լրանալը, ինչը իր հերթին հանգեցնում է նշված պայմանագրերի առոչինչ լինելուն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց մրցույթի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է 17.08.2017թ., և պայմանագիր կնքելու անգործության ժամանակահատվածը ըստ Օրենքի 10 օրացուցային օր է, ուստի Խորհուրդը «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից 21.08.2017թ. ներկայացրած բողոքը համարում է Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում ներկայացված:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից 21.08.2017թ. ներկայացված բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Սյունիք» ՍՊԸ-ին Ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու պահանջին, ապա Խորհուրդը գտնում է, որ բողոքը սույն մասով ենթակա է մերժման, քանի որ «Սյունիք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշման բացակայության պայմաններում Խորհուրդը օբյեկտիվորեն զրկված է նշված հարցը քննարկման առարկա դարձնելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սյունիք» ՍՊԸ-ի կողմից 21.08.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. դադարեցնել «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց մրցույթի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ Ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով.

2. «Սյունիք» ՍՊԸ-ին Ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ ծանուցում ուղարկելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**